Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
սեպտեմբերի 22-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	**Պատասխանատու**	**Համակատարողը**	**Կատարման ժամկետը**	**Ակնկալվող արդյունքը**	**Ակնկալվող ֆինանսական միջոցները**	**Վերստուգելի չափանիշը**
1. Շտապ բժշկական օգնության և սպասարկման առավել արդյունավետ կազմակերպման սկզբունքից բխող կառուցվածքային փոփոխություններ						
1) Շտապ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային և հիվանդանոցային փուլերի միջև օրգանական կապի ապահովում, սկսած հիվանդին տեղում անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերումից, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բժշկական հաստատությունների համապատասխան բաժանմունք տեղափոխումով և որակյալ մասնագիտական անհետաձգելի բժշկական օգնության ապահովմամբ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Շտապ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային և հիվանդանոցային փուլերի միջև օրգանական կապի ապահովման արդյունքում առնվազն քրոնիկ հիվանդությունների հետ կապված կանչերի թվի 10%-ով նվազում: Տեղում անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերման և անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բժշկական հաստատությունների համապատասխան բաժանմունք տեղափոխման արդյունքում մինչ հիվանդանոցային և հիվանդանոցային մահերի թվի նվազում:	Ֆինանսավորում չի պահանջվում	Առնվազն 10%-ով քրոնիկ հիվանդությունների հետ կապված կանչերի թիվի նվազում, մինչ հիվանդանոցային և հիվանդանոցային մահերի թվի 5%-ով նվազում:
2. Շտապ բժշկական օգնության բրիգադներում մասնագիտացված բրիգադների ձևավորում						

1)Երևանում՝ շտապ բժշկական օգնության բրիգադներում մասնագիտացված, այդ թվում՝ մանկաբուժական բրիգադների, ձևավորում (մեկական մանկաբուժական բրիգադ յուրաքանչյուր ենթակայանում)	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2016-2020թթ.	Մասնագիտացված մանկաբուժական բրիգադների ձևավորման արդյունքում մանկական կանչերի սպասարկման որակի բարձրացում, երեխաների շրջանում մինչ հիվանդանոցային և հիվանդանոցային մահերի թվի նվազում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Երևանում՝ շտապ բժշկական օգնության յուրաքանչյուր ենթակայանում ձևավորված մեկական մանկաբուժական բրիգադ:
2) Հայաստանի Հանրապետության մարզերի խոշոր քաղաքների շտապ բժշկական օգնության բրիգադներում մասնագիտացված բրիգադների, այդ թվում՝ մանկաբուժական, ձևավորում (մեկական մանկաբուժական բրիգադ մարզկենտրոնների կայաններում)	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Մասնագիտացված մանկաբուժական բրիգադների ձևավորման արդյունքում մանկական կանչերի սպասարկման որակի բարձրացում, երեխաների շրջանում մինչ հիվանդանոցային և հիվանդանոցային մահերի թվի նվազում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Մարզկենտրոնների շտապ բժշկական օգնություններում ձևավորված մեկական մանկաբուժա-կան բրիգադ:
3. Երևանի շտապ բժշկական օգնության ավտոպարկի նորացում և ժամանակակից սարքավորումներով և դեղարկղերով ապահովում						
1)Երևանում շտապ օգնության մեքենաների (այդ թվում՝ ռեանիմոբիլների) և ժամանակակից սարքավորումների ու դեղարկղերի ձեռքբերում (յուրաքանչյուր 20.000 բնակչին՝ մեկ բրիգադ սկզբունքով)	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2016-2020թթ.	Արդյունքում բոլոր շահառուների համար շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության բարձրացում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Երևանում ձևավորված շուրջ 50 բրիգադ, ձեռք բերված մեքենաներ (այդ թվում՝ ռեանիմոբիլներ) և ժամանակակից սարքավորումներ ու դեղարկղեր
2)շտապ բժշկական օգնության մեքենաների ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2016-2020թթ.	Ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերման արդյունքում վարակիչ հիվանդների տեղափոխման գործընթացի իրականացման ապահովում:	ՀՀ պետական բյուջեի «Շտապ բժշկական օգնության ծառայություն ներ» ծրագրի իրականացման նպատակով	Շտապ բժշկական օգնության բոլոր մեքենաներում ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների առկայություն:

					նախատեսված հատկացումների սահմաններում	
3) Երևանի շտապ օգնության կայանների վերանորոգում և կահավորում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2016-2020թթ.	Երևանի վերանորոգված և կահավորված շտապ օգնության կայաններ:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Վերանորոգված և կահավորված շտապ օգնության կայաններ
4. Հայաստանի Հանրապետության մարզերի շտապ բժշկական օգնության ավտոպարկի նորացում և ժամանակակից սարքավորումներով և դեղարկղերով ապահովում						
1)Հայաստանի Հանրապետության մարզերում շտապ օգնության մեքենաների (այդ թվում՝ ռեանիմոբիլների) և ժամանակակից սարքավորումների ու դեղարկղերի ձեռքբերում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Արդյունքում բոլոր շահառուների համար շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության բարձրացում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Ձեռք բերված 50 մեքենաներ (այդ թվում՝ ռեանիմոբիլներ) և ժամանակակից սարքավորումներ ու դեղարկղեր
2) Շտապ բժշկական օգնության մեքենաների ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերման արդյունքում վարակիչ հիվանդների տեղափոխման գործընթացի իրականացման ապահովում:	ՀՀ պետական բյուջեի «Շտապ բժշկական օգնության ծառայություն ներ» ծրագրի իրականացման նպատակով նախատեսված հատկացումների սահմաններում	Շտապ բժշկական օգնության բոլոր մեքենաներում ախտահանման, կահավորման, անհատական պաշտպանիչ միջոցների առկայություն:
3) Հայաստանի Հանրապետության մարզերի շտապ բժշկական օգնության կայանների համալրում տեղանքի ռելիեֆին համապատասխանող ամենագնաց տրանսպորտային միջոցներով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Արդյունքում՝ անկախ բնակավայրի ռելիեֆից, բոլոր շահառուների համար շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության ապահովում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Տեղանքի ռելիեֆին համապատասխանող ձեռքբերված 10 ամենագնաց տրանսպորտային միջոցներ
4)Շտապ օգնության կայանների վերանորոգում և կահավորում	Հայաստանի Հանրապետության առողջապահության	Հայաստանի Հանրապետության մարզպետարաններ	2016-2020թթ.	Շտապ օգնության վերանորոգված և կահավորված կայաններ:	Հայաստանի Հանրապետության օրենքով	Վերանորոգված և կահավորված շտապ օգնության կայաններ

	նախարարություն				չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	
5. Շտապ օգնության ծառայության ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակում						
1) Շտապ օգնության ծառայության գործող ֆինանսավորման համակարգի վերանայում, ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2017-2020թթ.	Ֆինանսվորման նոր մեխանիզմների ներդրում	ՀՀ պետական բյուջեի «Շտապ բժշկական օգնության ծառայություն ներ» ծրագրի իրականացման նպատակով նախատեսված հատկացումների սահմաններում	Ծառայությունն իրականացնող ընկերությունների ֆինանսավորում բնակչության թվաքանակի և կատարողականի համամասնությամբ
6. Կանչերի ընդունման և փոխանցման միասնական բազմամակարդակ համակարգչային համակարգի ներդրում						
1) Կանչերի ընդունման և փոխանցման բազմամակարդակ (տարամակարդակ) միասնական համակարգչային համակարգի ներդրում անկախ բժշկական օգնության ծառայության ենթակայությունից	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2016-2017թթ.	Շտապ օգնության ծառայության կանչերի ստացման ու հաղորդման բազմամակարդակ (տարամակարդակ) միասնական՝ կենտրոնացված համակարգչային համակարգի ներդրման արդյունքում հնարավորություն կընձեռվի այլ ծառայությունների հետ տարբեր մակարդակներում համատեղ և ներդաշնակ աշխատանքի կազմակերպման և գործարկման համար, այդ թվում արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչպես նաև կապահովի ծառայության արդյունավետ կառավարումը՝ այն առավելագույնը հասանելի դարձնելով բոլոր շահառուների համար:	Ֆինանսավորում չի պահանջվում	Այլ ծառայությունների հետ տարբեր մակարդակներում, այդ թվում արտակարգ իրավիճակների պայմաններում, համատեղ և ներդաշնակ գործունեություն, բոլոր շահառուների համար հասանելի շտապ բժշկական օգնություն:
7. Միասնական տեղեկատվական տեխնոլոգիաների հաշվետվական-վերլուծական ծրագրերի ներդրում						
1)Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում միասնական տեղեկատվական տեխնոլոգիաների	Հայաստանի Հանրապետության առողջապահության		2017-2020թթ.	Նման ծրագրերի ներդրման արդյունքում կապահովվի ծառայության որակական	Հայաստանի Հանրապետության օրենքով	

հաշվետվական-վերլուծական ծրագրերի ներդրում	նախարարություն			վերլուծությունների և , եզրակա-գությունների կատարումը, գործունեության հետագա ծրագրերի կառուցումը:	չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	
8.Շտապ բժշկական օգնության անձնակազմի վերապատրաստումների կազմակերպում						
1) Իրականացնել բժիշկների վերապատրաստումներ 5 տարին մեկ անգամ՝ 7-շաբաթյա ցիկլով	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	2017-2020թթ.	Իրականացված վերապատրաստումների արդյունքում մատուցված շտապ և անհետաձգելի բժշկական օգնության որակի բարձրացում, մահերի նվազում:	ՀՀ պետական բյուջեի միջոցներ, Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Բոլոր բժիշկների վերապատրաստման վկայականների առկայություն:
2)Իրականացնել բուժակների և բուժքույրերի վերապատրաստումներ 5 տարին մեկ անգամ՝ 5-շաբաթյա ցիկլով	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	2017-2020թթ.	Իրականացված վերապատրաստումների արդյունքում մատուցված շտապ և անհետաձգելի բժշկական օգնության որակի բարձրացում:	ՀՀ պետական բյուջեի միջոցներ, Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Բոլոր բուժակների ու բուժքույրերի վերապատրաստման վկայականների առկայություն:
3)Իրականացնել վարորդների վերապատրաստումներ 2 տարին մեկ անգամ, 1-շաբաթյա ցիկլով	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն	2017-2020թթ.	Իրականացված վերապատրաստումների արդյունքում շտապ և անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության բարելավում:	Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ	Բոլոր վարորդների վերապատրաստման վկայականների առկայություն:
9. Շտապ բժշկական օգնության ոլորտը կարգավորող գործող իրավական ակտերի լրամշակում և ներդրում						
1) Շտապ բժշկական օգնության ծառայության ոլորտը կարգավորող իրավական ակտերի լրամշակում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն		2017-2018թթ.	Շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունը կարգավորող իրավանորմատիվային վերանայված և լրամշակված դաշտ:	Ֆինանսավորում չի պահանջվում	Լրամշակված ակտերի ընդունում